

Հ. Դ. ՓԱՓԱՋՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՒՀԱՄԱԴ-ԽԱՆ ՂԱԶԱՐԻ ՄԻՐԶԱ-ԱՂԱ ՍԻՊԿԻՆԵ ԵՎ
ԱՀՄԱԴ-ԱՂԱ ԶԻՆԱՆԻՆ ՇԵՈՐՀԱՄ ԱՂԱՅՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ
(XVIII դ.)

Երևանի բեկլարբեկինների և խանների՝ XVII—XIX դդ. հրամանագրերը ու պաշտոնական գրությունները (հոքմեր և թա՛լիղաներ), որպես պատմական սկզբնաղբյուրներ, որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում և օգնում են Արարատյան երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության բազում հարցերի լուսաբանմանը: Այդ վավերագրերը ներկայումս հիմնականում պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի, արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանի թղթապանակներում¹: Մինչև 1650-ական թվականներին վերաբերող մի քանի հրամանագրերի բնագրերը հայերեն և ռուսերեն թարգմանություններով և ծանոթագրություններով արդեն լույս են տեսել «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտական» շարքի Բ պրակում²: Իսկ հետագա դարերի հարյուրավոր հրամանագրեր, ժամանակագրական հաջորդականությամբ, կտպագրվեն հրատարակության պատրաստվող հաջորդ պրակներում:

Անշուշտ առավել մեծ թիվ են կազմում XVIII—XIXդդ. հրամանագրերն ու պաշտոնական այլ գրությունները, որքանով որ այդ շրջանում և հատկապես XVIII դ. երկրորդ կեսում, Երևանի խաներն ավելի ինքնիշխան էին և Իրանում կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում հանդիսանալով իրենց ենթակա վիլայեթի (Արարատյան երկրի) լիիրավ տերը, բոլոր հարցերը անձամբ էին տնօրինում:

Ինքնին հասկանալի է, որ կաթողիկոսական դիվանում առկա փաստաթղթերը իրենց գերակշիռ մասով վերաբերում են էջմիածնի վանքին, ուստի նրանց մեջ արտացոլված են Հայոց եկեղեցու և հայ համայնք-

ների իրավական վիճակին վերաբերող հարցերը, որոնք որպես դիվանական նյութեր զգալի չափով օգնում են այդ խառնակ տասնամյակներում երկրի ընդհանուր իրավիճակի և արևելահայոց ազատագրական շարժումների պատմության գիտական վերամշակմանը:

Տնտեսական, վարչական և այլ հարցերին վերաբերող խանական հրամանագրերն ու պաշտոնական հրահանգներ կամ կարգադրություններ պարունակող փաստաթղթերը, մեծ մասամբ, չեն պահպանվել: Այդպիսի մի քանի փաստաթղթերի բնագրեր կամ շարիաթական պատճեններ կան առանձին ազնվականների կամ մելիքական գերդաստանների տոհմական արխիվներում³:

Այս բացը մասամբ լրացնում է Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 233 պարսկերեն ձեռագիրը, որի մեջ ընդօրինակված են 1780—90-ական թթ. Երևանում իշխած Հուսեյն-Ալի, Ղուլամ-Ալի և Մուհամադ խանների օրոք խանական դիվանատանը գրի առնված բազմազան պաշտոնական գրությունների և նամակների պատճենները: Ընդօրինակությունը կատարված է խանի գլխավոր գրագիր (մուշի բաշի) Միրզա-Մուհամադ-Մուսլիմ Երևանցու խմբագրությամբ, խանի պահանջով, որպես պաշտոնական գրությունների, հրամանագրերի, նամակների և այլ փաստաթղթերի դասական օրինակների ժողովածու:

Շուրջ 200 վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում ազգականներին և բարեկամներին, ինչպես նաև Ազերբայջանի խաններին ու վրաց Հերակլ արքային, Թագուհուն (դեդոփալի) և գահաժառանգին, Թուրքիայի սուլթանին, մեծ վեզիրին և սահմանամերձ փաշաներին, Դաղստանի Ումմա-խանին, Ալի-Մուրադ խան Զանգին, Աղա Մուհամադ-խան Ղաչարին, Վրաստանում ուսական զորքերի հրամանատարին և այլ պաշտոնական անձանց հղված բազմաբովանդակ նամակները: Կարևոր են հատկապես վրաց արքունիքի հետ տեղի ունեցած գրագրություններ⁴, ինչպես նաև Խոյի Ահմադ-խան Դումբուլիին հղված նամակները: Վերջինիս հետ Երևանի խաները խնամիական կապեր ունեին և հաճախ հանդես էին գալիս որպես զինակիցներ:

Խանական հրամանագրերը կամ թա՛լիդաները, ընդամենը 14 հատ են, որոնց մեջ կան ինչպես տիտղոսների և պաշտոնների շնորհման, այնպես էլ կալվածատիրական իրավունքների մասին տրված թա՛լիդաներ և հոգմեր: Հրամանագրեր են տրված խանի դիվանատան վեզիրին, գլխավոր աստղագետին, դատավորի (ղազի), պալատական արարողապետի (էշիգադասի), էյմիաթնի Ղուկաս կաթողիկոսի (1780—1799 թթ.), խանի մզկիթի կալվածների վերակացուի, հոգևոր դպրոցի (մադրասե)

տնօրենի, պալատական բժշկի և վերջապես քրդական Սիպկի և Զիւան ցեղերի առաջնորդների անուններով, որոնցով նրանք նշանակվում կամ վերահաստատվում են իրենց պաշտոններում:

Արարատյան երկրի տարբեր գավառներում կամ մահալներում բռնակվող քրդական ցեղերի մասին առավել հավաստի տեղեկությունները վերաբերում են XIX դ. 30-ական թվականներին, Պետական խորհրդական Ի. Շուպենը Հայկական մարզին նվիրված մեծարժեք աշխատության մեջ. բավական մանրամասն տվյալներ է հաղորդում Ռուսական կայսրությանը միացված այս նոր երկրամասի շիա, սյունի և եզդիի քրդերի մասին⁵:

Հայտնի է, որ քրդական ցեղերի՝ բուն Քուրդիստանի և պատմական Հայաստանի տարածքի վրա տեղակայման վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ հաղորդող հիմնական աղբյուրը XVI դարի հեղինակ Շարաֆ խան Բիթլիսիի «Շարաֆնաման» է, որտեղ, Արարատյան երկրի մասին ոչ մի հիշատակություն չկա: Հայտնի է նաև, որ սահմանամերձ Ալաշկերտի և Բայազեդի շրջակայքում բուն կերպով քրդական ցեղեր են բնակեցվել միայն XVI դ. սկզբում, սուլթան Սելիմ I-ի օրոք, մոլլա Իզրիս Բիթլիսիի նախաձեռնությամբ և հորդորներով: Շարաֆ-խան Բիթլիսիի վկայությամբ, այդ տարիներին ճրագմաթիվ աշիրաթներ Սուլեյմանի քրդերից, որոնք բնակվում էին Միաֆարդինի կողմերում, գնացին բնակություն հաստատելու կըզըլբաշներից գրավված վայրերում, միաժամանակ հանձն առնելով պաշտպանել սահմանները⁶: Նույն քաղաքականությունը կիրառվում էր նաև շահ Իսմայիլի կողմից, որն իրեն հավատարիմ Մահմուդի և Փազուկի քրդերին տիրույթներ էր տալիս Ալաշկերտի՝ դեռևս իր տիրապետության տակ գրտնըվող արևելյան հատվածում և Մակվի շրջակայքում⁷:

XVII դ. սկզբում արդեն, հիշատակություններ կան այն մասին, որ այդ ռազմիկ ցեղերը հաճախ ասպատակում էին Արարատյան դաշտի, Սուրմալուի և Շարուրի արգավանդ շրջանները. «Քողում ասել զՄարաց ազգացն, որ են Քրդաց,—գրում է Գրիգոր Դարանաղցին—որ սոքա մերձ լինելով վերին աշխարհացն, հանապազ ասպատակ առնելով ի վերա նոցա և գերի վարելով ի Բաղեշ, ի յԱրճէշ և ի Վան և յամենայն Ոստան: Ըն նոքա զՊարսից տէրութեանն հայքն հանապազ գերեցնելով, որ ահա երեսուն և երկու ամ է, որ հանապազ թշնամիք են միմեանց պարսիկք և տաճիկք»⁸:

Քրդական առանձին աշիրաթների՝ դեպի Արարատյան երկրի ներքին լեռնային գավառները ներթափանցելու համար նպաստավոր պայման-

ներ ստեղծվեցին հատկապես շահ Արքայի ձեռնարկած մեծ բռնագաղթից հետո, երբ ամայացած շատ գյուղերում և ալպյան արոտավայրերում կայուն բնակություն հաստատեցին կրգըլբաշ քոչվոր ցեղերից, ինչպես նաև շիա քրդերի ցեղային խոշոր միավորումներից անջատված առանձին համայնքներ⁹։

Որոշակի տվյալներ կան XVII դ. վերջերից և XVIII դարում արդեն Աղմաղանի կամ Գեղամա լեռների, Նղեգնաձորի և Բազարչայի արոտավայրերում քրդական ցեղերի ձեռք բերած յայլաղների, ինչպես նաև Ղափանում և Բարգուշատում բնակություն հաստատած քրդական քոչվորության մասին¹⁰։ Ուշագրավ է այս տեսակետից XVIII դ. սկզբներին արդեն թուրքացման ուղին բռնած Կարաշուլու շիա քրդերի Զանգեզուրի «Ուլթափա», ինչպես նաև «Քյուրդլար» կոչվող արոտավայրերում, Դավիթ Բեկի շարժման դեմ գրաված թշնամական դիրքորոշումը, որն, ինչպես գիտենք, ավարտվեց Կարաշուլուների գլխավին պարտության մեջ և այդ վայրերից արտաքսումով¹¹։

Ի. Շոպենի վկայությամբ XVIII դարում Հայկական մարզում ալվելի բազմաթիվ էին շիա քրդերը և հատկապես Կարաշուլու մեծ աշիրաթի մեջ մտնող ցեղերը։ Սյունիների մեջ առավել բազմամարդ է եղել Զիլանի աշիրաթը (2000 տոն), որոնց մեծ մասը, սակայն, չի ցանկացել մնալ ռուսական տիրապետության տակ, քոչելով դեպի Թուրքաց տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանի մերձակա շրջանները¹²։

Աղբյուրները, մեծ մասամբ, վկայում են, որ քրդական ցեղերը Արարատյան երկրում համեմատաբար մեծ թիվ են կազմել XVIII դարում։ Այս տեսակետից էլ որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ քրդական Սիպկի և Զիլան ցեղերի առաջնորդներին շնորհած հրամանագրերը, որոնք գալիս են հաստատելու նրանց տրված իրավունքներն ու քրդական ցեղերի վիճակը Երևանի խանության կամ Արարատյան երկրի սահմաններում։

Վավերագրերի պարսկերեն բնագրերը, ինչպես ասվեց, ընդօրինակված են Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ժողովածուի N 233 մատյանի 177—178 և 377—378 էջերում, ընթերցելի նասխալիղ, մասամբ շիբասթե գրությամբ, շարադրված են ժամանակի գրագրություններին բնորոշ վերամբարձ ոճով և ժանրաբեռնված խրթին ներբողագրական-ալլաբանական արտահայտություններով։

Հրամանագրերի հրապարակումը կատարում ենք ընդօրինակությանը տրված վերնագրերով։

Քուրդ մեծամեծներէց, Միրզա-Աղա Սիպկիի աղայության
պաշտօնի վերաբերյալ շարադրված հրամանագիրը.

Բարձր հրամանագիրս հրապարակվեց հետևյալի մասին.

Որքանով, որ հավատարիմ մերձավորներից յուրաքանչյուրի նկատմամբ սերն ու հոգատարութիւնը միշտ եղել է մեր շնորհափայլ մըտքում, գթառատ սրտում և ուշադրութեան կենտրոնում, մերձավորներ, որոնք իրենց նվիրվածութեամբ, անկաշառ ծառայութեամբ և հարատև անձնվիրութեամբ, շարունակ արժանի են եղել մեր հատուկ շնորհներին և ուշադրութեանը և որոնց մենք իրենց դասից և մերձավորներից միշտ ջոկել ենք, բարձրացրել ու գերադասել, ուստի մեծափառ, բարձրագահ և բարձրաստիճան Միրզա-Աղա Սիպկիին, որի մեծատուն ցեղի հավատարիմ և բանիմաց մարդկանց մաքուր վարքն ու հավատարիմ աշխրաթի շանադիր անձնվիրութիւնը հանրահայտ իրողութիւն է, մեծարեցինք և նշանավորեցինք քրդական ամբողջ փառապանծ Սիպկի ցեղի աղայութեան պաշտօնով և այս մեծ պարգևով նրան իր դասի մեջ հարգարժան ու արժանապատիվ դարձրինք, որպեսզի ըստ իր կարողութեան և ինչպես որ հարկն է և իր բնութեանը վայել ձևով, շնա կարգավորել նրանց գործերը և հոգալ կարիքները և խնամք ու հոգատարութիւն դրսևորելով ոչ մի վայրկյան չթերանա և անտես չառնի: Անհրաժեշտ է նաև, որ փառապանծ Սիպկի ցեղի մեծապատիվ քյադիսուդանները, ավագներն ու մյուս դասերի մարդիկ այդ բարձրաստիճան անձնավորութեանը իրենց արժանավոր աղան և մեծավորը ճանաչեն և ոչ մի դեպքում նրանից երես չդարձնեն և չփորձեն խուսափել նրան հպատակելուց և ծառայելուց և դուրս չգան նրան ենթարկվելու ու հնազանդվելու ճանապարհից և այս ընդունելով որպես խիստ կարգադրութիւն, իրենց պարտականութիւնը համարեն:

Գրվեց [1199] թ. Ռաբի, II ամսին (1785 թ. փետրվ. 11—մարտ 11):

(Մատենադարան, Արարատառ քաժին, ձեռ. 233, էջ 177—178):

Հրամանագիր, որ նորին բարձրութիւնը շարադրել է Զիլանի քուրդ
Անմադ-Աղայի աղայութեան և մեծավորութեան մատին

Բարձր հրամանագիրս հրապարակվեց հետևյալի մասին.

Որքանով, որ այս վեհագնյա զարմի մեծաշուք անձանց և իշխանավայել ցեղի անվախճան գերդաստանի հանգրվանելու և քոչելու առաջին

իսկ օրից, միշտ նկատի ենք ունեցել և ուշադիր ենք եղել, որպեսզի իրենց հնազանդությամբ, անձնվիրությամբ և անկեղծ ու հավատարիմ ծառայությամբ առաջընթացներին, իրենց արժանիքներին և կարգին վայել աստիճաններով առավել արժանապատիվ դարձնենք և կշիռն ու աստիճանը բարձրացնելով և իր դասի մեջ մեծարյալ և ընտրյալ դարձնելով և նրանց նկատմամբ ցուցաբերվող անսպառ շնորհներով, բարերարությամբ, գթությամբ և ողորմությամբ իր դասակիցների և այլ ցեղերի բարի նախանձը շարժենք, ուստի մեծափառ, գերապատիվ և բարձրագահ, անկեղծ ու հավատարիմ քուրդ Ահմադ-Աղա Զիլանիին, որ նախնիներից սկսած, սերնդից սերունդ միշտ աչքի է ընկել հավատարմությամբ, վեհանձնությամբ, խելահասությամբ և գործիմացությամբ ու փայլել կարողությամբ ու ընդունակություններով, ի տրիտուր բարի ծառայությունների և հրամանաց հնազանդության, մեծարեցիկնք և նշանավորեցիկնք քրդական ամբողջ փառապանծ Զիլան աշիրաթների աղայության պաշտոնով և այս մեծ պարգևով նրան իր ժողովրդի մեջ հարգարժան ու արժանապատիվ դարձրինք և հրամայեցինք, որ ինչպես որ իր իմացությանն ու կարողությանը կվայելի, ուշադիր լինի հոգալու և կարգավորելու բոլոր ցեղերի գործերը և լուծելու բոլոր ցեղախմբերին վերաբերող հարցերը և հոգատարությամբ զբաղվի նրանց գործերի ու հոգսերի կարգավորմամբ և ոչ մի դեպքում անփութություն չցուցաբերի ու չթերանա: Անհրաժեշտ է նաև, որ ցեղի բոլոր քյադխուդաներն ու ցեղախմբերի բոլոր ավագները վերահիշյալ բարձրապատիվ անձնավորությանը բոլոր հարցերում ու խնդիրներում իրենց աղան ու մեծավորը ճանաչեն և ծառայություն մատուցելով՝ հնազանդվեն և ենթարկվեն նրան և այս ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ իրենց պարտականությունը համարեն:

Դրվեց 1200 թ. սրբազան մուհարամ ամսի 22-ին (30 նոյեմբերի 1785 թ.):

(Մատենադարան, Արաբատառ, բաժին, ձեռ. 233, էջ 377—378):

بعینه منسوب قیامیه را تا سرسپه که در عهد بزوان بخواند که اگر کسی
حکم عالم باشد آنکه چون مکرر در خطبه که در میان کوفت و غیره در میان
که هر یک از این نشانیان عموماً در بعضی از این کتب و کتب دیگر که در این
الکشتند احسن عقیدت و معرفت که در این راه این دل صفت این راه
مطلب و در درستی استقامت و جان نثار که در این راه و در این راه
و کما به الفاظ و صفات خاص سرور و بندگی که در این کتب
و الاخوان بر عهد و جنت رسیده اند این صفات که در این کتب و این کتب
سرور و افتخار و جنت هم عقیده و محو و کار و این کتب و این کتب
و عفت و عفت و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
منصب آنکه با عزم این صید اگر او سپاس سرور و در این کتب و در این کتب
عظمت و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
و الاخوان و این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
صفت و نظم و نسق این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
ظهور و این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
که در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
صفت این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
خود دانسته و این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
و این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب
دانسته و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب و در این کتب

تسلیقه منصب آقایی میرزا آقایی سبکی که از حمله بزرگان اکراد

سوده علمی شده

حکم عالمی عند آنکه چون مرکوز خاطر خطیر مکرمت معون ضمیر مدیر
مرحمت متحون است که هر یک از خیمه نشینان عرصه عریس الارجای یکرنگی و اخلاص
را که اوتاد ثرین الاشداد حسن عقیدت و خدمت گذاری را بر زمین دل صداقت
آئین رده سلطان وار در طریق استقامت و جان نثاری استوار و سرفراز اندمانه
حکما سارکاء بالکتاب و عنایات خاص سرفرازی و سفوارشات گوناگون بیس الاکتاف
والاقران سربلند و معنار ساریم لهذا عالیشان معلى مکان سنی المرتبه و
السمان میرزا آقایی سبکی را که احاط عظیم الخیام خلوص کاردانیس رحیل بیلا
ظهور و اعتبار عقیدت سراسر سعی و جان نشانیس مسوطن فثاق وقوع و مدور
است بمصوب آقایی عموم اهل حلیل اکراد سبکی معزز و سربلند و ماین موهبت
علمی او را بهی الامثال مکرم و ارجمند ساخته مقرر نمودیم که من حیث الاستعداد
والانفراد چنانکه شاید و باید و طریقیه از جوهر او سزد و آید در رفتن و رفتن
مهمات و نظم و نسق امور و ضروریات ایشان ماعی جمیل و حسن اهتمام منصف
ظهور و انجام رسامیده دقیقه ار تمتیت و حرحایی و صلاح دید ایشان فرو گذاشت
و سامری به نماید مقرر آنکه کخدا بان ذی شاق و ریش سفیدان و سایر طبقات
ایل حالات نشان سبکی عالیشان معزى الیه را بالاحقاق آقا و بزرگ خود دانسته
بهیچوجه روگردان و گردن از خدمتگذاری و متابعت او در نکشیده باز جاده
اطاعت و انقیاد او بیرون نگذارند و در ایچ باب فتن لازم دانسه و در
عهد شناسند.

نحریراً فی شهر ربیع الثانی (۱۱۹۹)

А. Д. ПАПАЗЯН

УКАЗЫ ЕРЕВАНСКОГО ХАНА МУХАММАД-ХАНА
КАДЖАРА О ВОЗВЕДЕНИИ МИРЗЫ-АГА СИПКИ
И АХМАДА-АГА ЗИЛАНИ В ДОЛЖНОСТЬ «АГА» (XVIII в.)

Резюме

Многочисленные копии официальных бумаг и писем, составленных в 60—80 гг. XVIII в. старшим секретарем (мунши-баши) Ереванских ханов Мирза-Мухаммад Муслимом Ереванским, в те же годы были включены в рукописный сборник, который ныне хранится в Восточном фонде Матенадарана им. Маштоца под номером 233. Сборник также содержит указы (та'лика) Мухаммад-хана 1199 и 1200 гг. о даровании вождям курдских племен Сипки и Зилани проживавших в пределах ханства (Араратский край), должности «ага» (мансаб-и ага-йи) и утверждающих их права как племенных вождей с приказом о подчинении им старейшин этих племен.

Расшифровка и публикация персидского текста указов параллельно с армянским переводом имеют целью сделать его доступным для более широких кругов курдоведов.

Մ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, 1բ, 1գ, 1դ, 1ե, 1զ, 1է, 2ա, 2բ, 3:
2. Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հրովարտականք, պրակ Բ, կազմեց Ն. Դ. Փափազյան, Ե., 1959, վավ. 14, 34, 36:
3. Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1զ, վավ. 1018, 1019 և այլն. տե՛ս նաև նույն տեղում, Մելիք Շահնազարյանների գործը, թղթ. 241, վավ. 37, 41, 47 և այլն:
4. Վրաստան ուղարկված և Վրաստանի հետ առնչվող 52 նամակների, մասամբ լրիվ և մասամբ համառոտ վրացերեն թարգմանությունները, որոշ վավերագրերի վերծանված պարսկերեն բնագրերով հայերեբ, հրատարակել է Ա. Ս. Ժնյվիլին. տե՛ս օ. Յերոջիլո, ցրցցնս Խնցնս Ծցր Զսթսրցցցցցցց ցսցցցցցցց ցցցցցցցցց, տծսցցցցցց, 1982:
5. И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, с. 528—529, 542 (այսուհետև И. Шопен).
6. Scheref-nameh ou Histoire des Kourdes, par Schéref, prince de Bidlis, publiée par V. Vellaminof-Zernof, SPb., 1860 (պարսկ. բնագիր), էջ 269—270, հմմ. Լեո, «Հայոց պատմություն», հ. 3, մաս Ա, Ե., 1969, էջ 174—175:
7. Իսքանդար Իբն Թուրքեման Մունշի, Թարիխ-ե ալամարայի աբրասի, Թեհրան, 1957 (պարսկ. բնագիր), հ. 1, էջ 141:
8. Դրիգոր Լաւսնաղցի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 298—299:
9. Տե՛ս Ն. Փափազյան, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (Ժէ դ.), «Լրրարեր հաս. գիտ.», 1977, № 21, էջ 42, 43:
10. Ն. Փափազյան, Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր, «Բաների Մատենադարանի», № 8, Ե., 1967, էջ 243:
11. «Դավիթ Բեկ» կամ «Պատմություն Հափանցուց», աշխ. Ն. Սամվել վրդ. Արամյան, Վենետիկ, 1978, էջ 131:
12. И. Шопен, с. 528—529, 542.